ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

10.10.2024թ Սևան համայնք Լճաշեն բնակավայր

2024թ հոկտեմբերի 10-ին ժամը 12:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<Նոր-Վազ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լճաշեն բնակավայրում բազալտի հանքավայրի տեղամասում կատարվելիք օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ հանրային քննարկում/1-ին փուլ/:

Հանրային քննարկումը վարում էր Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը, ներկայությամբ՝ <<Նոր-Վազ>> ՍՊԸ տնօրեն Ս. Նավասարդյանի, ինժեներ-երկրաբան՝ Մ. Հարությունյանի, արձանագրում էր՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Շ. Մուրադյանը.

Լսեցին՝

Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վ. Մարգարյանին, ով ներկայացրեց հանրային լսման նպատակը, այնուհետև խոսք տրամադրվեց մասնագետ Մ. Հարությունյանին, որն էլ ներկայացրեց աշխատանքների հերթականությունը և ուսումնասիրության նպատակները:

<< Նոր-Վազ >> ՍՊԸ տնօրեն Ս. Նավասարդյանը ներկայացրեց համայնքի վարչական սահմաններում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ծրագիրը: Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և հայտնաբերել բազալտի նոր պաշարներ, որի արդյունահանումը հետագայում կնպաստի համայնքի զարգացմանը, կիրականացվեն սոցիալական ծրագրեր և կկատարվեն նոր ներդրումներ:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ Արշակ Բաբայանը, Վոլոդյա Միրաքյանը, Վոլոդյա Ներսիսյանը:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները՝ Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը նշեց նախատեսվող աշխատանքների կարևորությունը բնակավայրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման համար: Փաստվեց նաև, որ աշխատանքների ընթացքում պետք է պահպանվեն համայնքի բնակիչների շահերը և բնապահպանական համապատասխան նորմերը: Համայնքը տալիս է իր նախնական համաձայնությունը՝ կատարելու նախնական երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ բնակավայրի վարչական սահմաններում:

Կից ներկայացվում է տեսաձայնագրությունը և մասնակիցների ցուցակը

Ձեռնարկող՝

<< Նոր-Վազ >> ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Նավասարդյան_____

Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար

Վահան Մարգարյան_____

Ինժեներ-երկրաբան

Սանվել Հարությունյան_____

Արձանագրող՝

Սևանի համայնքապետարանի

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ

Շուշանիկ Մուրադյան_____